


ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ



ԱՆՏԻՊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՏԵՆԷՔ-ՄԱՏԷՆԻ (ՔԵՍԿԻՆԻ) ՄԱՍԻՆ (1900 Թ.)

ՄԻՀՐԱՆ Ա. ՄԻՆԱՍԵԱՆ
mihran.min@gmail.com

Յետագայ էջերով հրատարակու-
թեան կու տանք Տենէք Մատէն (Քես-
կին) քաղաքի մասին 1900ին պատ-
րաստուած անտիպ գրութիւն մը, որ

մէկէ աւելի առումներով հետաքրքրական է եւ օգտակար կրնայ ըլլալ քա-
ղաքի պատմութեամբ շահագրգռուողներուն, որովհետեւ անոր անցեալին
հայող մեզի ծանօթ գրաւոր աղբիւրները շատ սակաւ են՝ ընդամենը քանի
մը թղթակցութիւն եւ յուշագրութիւն¹, այնպէս որ, այս հրատարակումը
կրնայ մասամբ գոցել գոյութիւն ունեցող բացը եւ գէթ ընդհանուր գաղա-
փար մը տալ տեղւոյն հայութեան անցեալին մասին:

Տենէք Մատէն-Քեսկինը հայաբնակ քաղաք մըն էր Անկիւրիա (Անգա-
րա) նահանգի Գըր Շեհիր գաւառին մէջ եւ կեդրոնն էր համանուն գաւա-
ռակին: 1915ին ունէր 440 հայ տուն, որոնք բոլորն ալ արքորութեան Հայոց
Յեղասպանութեան օրերուն² ու մեծամասնութեամբ կոտորուեցան³:

¹ «Տէնէք-Մատէն», *Դրօշակ*, Կիեննա, թիւ 11, 10 Ապրիլ 1896, էջ 88. նաեւ՝ Արշակ Ալպօյաճեան, *Պարմութիւն հայ Կեսարիոյ, Ա. հապոր*, հրատ.՝ Կեսարիոյ եւ շրջակայից հայրենակցական միութեան Գահիրէի վարչութեան, տպ. Յակոբ Փափազեան, Գահիրէ, 1937, էջ 883. նաեւ՝ Թէրոյիկ, *Գողգոթա հայ հոգեւորա-
կանութեան եւ իր հօրին աղէտի 1915 տարիին*, խմբ.՝ Արայ Գալայճեան, St. Vartan Press հրատ., Նիւ Եորք, 1985, էջ 336. նաեւ՝ Թ. Մինասեան, *Յուշեր. Ան-
գարայի եւ Քէսքինի հայոց գողգոթան*, տպարան Ա. Տէրյակոբեան, Փարիզ, 1957, 111 էջ. նաեւ՝ *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, Ե. հապոր, կազմ.՝ Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. ՄելիքԲախչեան, Յ. Խ. Բարսեղեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 2001, էջ 75:

² Թէրոյիկ, էջ 336:

³ Ս. Ակունի, *Միլիոն մը հայերու ջարդի պարմութիւնը*, Կ. Պոլիս, տպ. Յ. Ասատուրեան Որդիք, 1920, էջ 189:

Հեղինակը նախ ընդհանուր գիծերով ներկայացուցած է Տենէք Մատէնի տեղագրութիւնը, գիւղերը, արհեստները, տնտեսական վիճակը, ապա մանրամասնութիւններ հաղորդած է տեղւոյն թուրքերու եւ յոյներու կեանքէն եւ ուրուագծած է անոնց նիւթական ու բարոյական կեանքը, եւ հուսկ անդրադարձած քաղաքի հայութեան ու առանձինն ներկայացուցած երեք մեծ գաղթականութիւններուն՝ կիւրինցիներուն, կեսարացիներուն ու եոզղատցիներուն նկարագիրը, կրթական վիճակը, նիւթական պայմանները, զբաղումները, վաճառականութիւնը, արհեստները, խոհանոցը եւն.:

Հրատարակուող գրութիւնը օրին, մաս առ մաս - չորս անգամով - դրկուած է Կ. Պոլսոյ *Բիւրակն* հանդէսին, բայց եւ այնպէս, մնացած է անտիպ: Անոր առաջին մասը խմբագրութեան հասած է 14 Փետրուար 1900ին, վերջինը՝ 30 Ապրիլին:

*Բիւրակն*ի «Նամակատուփ»ին մէջ կան հեղինակին ուղուած եւ յօդուածին առնչուող խմբագրական երկու դիտողութիւններ, որոնք կը բացատրեն թէ յօդուածը օրին ինչու՞ չէ հրատարակուած: Առաջինին մէջ ըսուած է որ «*Կը սպասենք ասարտին՝ «Տեղագրականը» հրատարակելու համար*»⁴, իսկ երկրորդին մէջ՝ «*Տեղագրականը կը պահենք յարմար ժամանակին*»⁵:

Յաջորդ տարեմուտին, *Բիւրակն* կը դադրէր նախկինի նման ազգագրական հանդէս մը ըլլալէ ու կը վերածուէր կրօնա-դաստիարակչական եւ գրական հանդէսի, այնպէս որ, այս «Տեղագրականը» դուրս կը մնար այլեւս իր հետաքրքրութիւններու դաշտէն ու չէր յանձնուեր տպագրութեան, եւ հանդէսին յղուած ու չհրատարակուած նմանօրինակ քանի մը այլ յօդուածներու հետ, աւելի ետք կ'անցնէր պոլսաբնակ Տէր Յովհաննէս Ա. քինյ. Մկրտանին, ապա անոր թողօնին հետ սեփականութիւնը կը դառնար բանասէր Թորոս Ազատեանին, որուն մահէն ետք, 1957ին կը հանգրուանէր Երեւանի Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարան (ԳԱԹ), ուր կը պահուի ցարդ:

Գրութեան հեղինակ **Աղէքսանդր Գլըրճեան**ի մասին կենսագրական տեղեկութիւններ չունինք: Գիտենք միայն որ ուսուցչական պաշտօններ վարած է Տենէք Մատէն եւ Գալեճիք, ու եղած է Կ. Պոլսոյ *Բիւրակն* հանդէսի գաւառային աշխատակիցներէն մէկը: Նոյն հանդէսին մէջ իրմէ հանդիպած ենք հետեւեալ գրութիւններուն.-

1- «Ձէքի աշուղը», *Բիւրակն* լրագիր, Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 11, 4 Մարտ 1899, էջ 172-73: Ղրկուած է Տ. Մատէնէն:

⁴ «Նամակատուփ», *Բիւրակն* լրագիր, Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 15, 18 Ապրիլ 1900, էջ 239:

⁵ «Նամակատուփ», *Բիւրակն* լրագիր, Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 31, 1 Օգոստ. 1900, էջ 749:

2- «Գալաճիք ու ես», Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 21, 19 Մայիս 1899, էջ 327-29: Շար.ը՝ թիւ 22, 26 Մայիս 1899, էջ 344-45 եւ թիւ 25, 16 Յունիս 1899, էջ 394-97:

3- «Կտոր մը Զէքի հայ աշուղէն», Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 24, 9 Յունիս 1899, էջ 376:

4- «Երկու խօսք համայնի մը առթիւ», Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 45, 10 Նոյ. 1899, էջ 715-16:

Գրութիւնը հրատարակութեան տրուած ենք նոյնութեամբ, առանց որեւէ լրօջ փոփոխութեան: Ուղղած ենք միայն հանդիպող ուղղագրական վրէպներն ու կէտադրութիւնը՝ բնագիրը աւելի ընկալելի դարձնելու համար, եւ աւելցուցած ենք անհրաժեշտ քանի մը ծանօթագրութիւններ:

Բնագիրը կը պահուի ԳԱԹի մէջ, Թորոս Ազատեանի ֆոնտ, 8/III: 16 ձեռագիր էջ է, գրուած ընթեռնելի ձեռագրով եւ կապոյտ մելանով: Քարտէսը առնուած է Յուշամատեան կայքէջէն:



ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. ՏԵՆԷԿՄԱՏԵՆ

Հակառակ շատ մը պրպտումներու, չկրցայ ստոյգ եզրակացութեան մը յանգիլ, սա «Տէնէկ» կամ «Տէնէք» բառին ստուգաբանութեան նկատմամբ: Իր շատ մօտը գտնուող ծառայիտ լեռները, որք «Տէնէկ տաղը» կը յորջորջուին տեղացիներէն, ատենօք իրենց անունը փոխ տուած են մեր գիւղաքաղաքին: Եւ կամ, Տ. Մատէնի շրջակայքը, ըլլալով երբեմն շահագործուած եւ հիմա ամլութեան դատապարտուած արծաթի խորունկ այրե՛րը տեղի տուին «Տէնէնկ» անունին, որ հաւանականօրէն պէտք է ըլլայ արաբերէն «տէհէպ» (ոսկի) բառին աղաաղեալը: Չգիտեմ:

Տ. Մատէնի ե՛րբ եւ ո՛ր թուականին հիմնարկուած ըլլալն ալ յայտնի չէ: Կը պատմուի որ, ասկէ 40-50 տարի առաջ պարզ, անշուք գիւղ մ'է եղեր՝ թրքաբնակ: Տ. Մատէնի առաջին քրիստոնեայ տարրը կը կազմեն Կիւմիշխանէն,

Տրապիզոնն է և Ագտաղ-Մատենն գաղթող 5-10 տուն յոյները, որոնք վերո-
յիշեալ հանքերու մէջ իբր բանտոր ծառայած ըլլալով՝ ներկայ ժողովուրդէն կը
տարբերին մատենճի⁶ անունով: Ուստի հետզհետէ շէնցած, ծաղկած է Մատեն՝
կեսարացի, կիւրինցի եւ եօզկասոցի տարբեր հասարակութեան տակաւ հաս-
տատուելովը:

Դիրք, օդ, ջուր

Թէեւ լեռնադաշտի մը վրայ կառուցուած է Տ. Մատեն, բայց շրջակայ
բլրակները բնական վարագոյրներ են գոգցես, անդին տարածուած ծաղկա-
ւէտ ու գեղատեսիլ հովիտները ծածկելու՝ դիտողի մը աչքերէն:

Մինչեւ մօտ առեններ, ո՛չ ոք կ'ուրանար Տ. Մատենի օդին բարերար ազ-
դեցութիւնները: Բայց արդեօք մօտակայ անտառակներու անդով ու անխնայ
սպառու՛մն է, կամ տարբեր հասարակութեան օրըստօրէական աճու՛մն է որ
տեղի կու տայ ց'այժմ հիւանդութիւններու շարքին:

Ի բաց առեալ 1-2 ընդլեռնեայ աղբիւրները, Տ. Մատենի ջուրը ո՛չ այնչափ
առատ եւ ո՛չ ալ առողջարար հանգամանք մ'ունի: Ուստի, հակառակ գաւառա-
կան սովորութեանց, ժողովուրդը հարկադրուած է ջուր գնել *Մէզարըլը չէշմէ* ա-
նուն վճիտ աղբիւրէ մը, մասնաւոր ջրկիրներու ձեռքով:

Գիւղեր

Տ. Մատեն մինակ գիւղաքաղաքն է 180-185 գիւղերու, որք երկու գիւղա-
խումբի կը բաժնուին *Սալմանլը* եւ *Գուլագարզ* անուններով⁷: Այս գիւղերէն 3-4
հատը իբր արուարձան կը ծառայեն Տ. Մատենի, 1-1^{1/2}-2 ժամ հեռաւորութեամբ
եւ լիովին յունաբնակ են, իսկ մնացեալները թրքաբնակ: Բայց Սալմանլըյի մէջ
եւս կը յիշուին քանի մը յոյն գիւղեր: Չմոռնանք յիշել հոս որ այս գիւղերէն շա-
տերը Եօզղատի եւ Սունկուրլուի սահմանակից են: Ուստի Փոքր Ասիոյ երկա-
թուղիի ընկերութիւնը տրամաբանական գործ մը տեսած կ'ըլլար, երբ վերոյիշ-
եալ քաղաքներու մենաշնորհին մասնակից ընէր Տ. Մատենն ալ, փոխանակ
ժխտելու վաճառականներու (տեղացի) այս մասին մատուցած խնդրագիրը:

Թուրք գիւղացիներուն մեծ մասը բարեբարոյ, պարտաճանաչ եւ չարքաշ
մարդիկ են: Իրենց հասարակ զբաղումն է երկրագործութիւն եւ խաշնարածու-
թիւնը: Երկրագործութիւնը հին դրութեամբ [կը] կիրարկուի եւ միջին վիճակի
մէջ է, բայց նշանակելի առեւտուրներ կ'ըլլան պրօսի վրայ: Էնկիւրիի գնահա-
տելի պրօսին մեծ մասը այս գիւղացիներու ապրանքներն են, որոնք ուրիշ
ապրանքներէն կը տարբերին *Քէսկին մալը* յորջորջումով: Կիները զօրաւոր
սեռին հետ համերաշխ կ'աշխատին սերմնացանի, հունձքի, այգեկութքի] եւ
ուրիշ պարագաներու մէջ, եւ իրենց պարապոյ օրերը կը նուիրեն գորգ, կար-
պետ եւ ծաղկա-կապերտ (չիչէկի քիլիմ) գործելու: Այս գիւղերէն շատերը մէջ

⁶ Մատեն (արաբ.)- մետաղ, ճի՛ արհեստ ցոյց տուող թրքերէն մասնիկ, մատենճի՛
մետաղի գործ ընող, մետաղագործ:

⁷ Կը լսենք նաեւ թէ, պաշտօնական թղթակցութիւններ կը կատարուին եղեր տե-
ղական կառավարութեանց միջեւ, Տ. Մատենի գիւղերը 5 գիւղախումբի բաժնելու
համար [Մանթաթագրութիւնը՝ հեղինակին]:

մէկ մզկիթ եւ մէկ մէկ ծաղկոցներ ունին (մէքթէպի իպթիտայի), բայց վերջինները ոչ առաւել գոհացուցիչ:

Յունաքնակ գիւղերն են Պարագ, Գըշլա, Գարըշտըրան, Եօգարը Քէօյ (պաշտօնական տումարներու մէջ Գարիյէի Պալա): Այս գիւղերու բնակիչներուն մեծ մասն ալ երկրագործ եւ խաշնարած են: Բայց կան նաեւ վաճառականներ եւ որմնադիրներ: Կիները մասնաւոր զբաղումներ չունին:

Այս գիւղերը ունին մէյմէկ քարաշէն ու կոկիկ եկեղեցիներ, սուրբերու անուան նուիրում: Դպրոցները անկեալ վիճակի մէջ են, ուստի շատ մը ուսանողներ Մատէնի յոյն վարժարանը կը յաճախեն: Իբր զքօսատեղի ալ կը ծառայեն այս գիւղերը Տ. Մատէնի քրիստոնէայ հասարակութեան: Դիտելի է այս գիւղերու եկեղեցիներուն անուան առթիւ Մատէնի յոյն երկսեռ հասարակութեան խումբ առ խումբ դիմումը վերջալուաէն մինչեւ արշալոյս կառքերով, ձիերով, նուագներով, երգերով ու պարերով:

Վաճառականութիւն

Թէեւ 1200-1300 տուն բնակիչներով փոքր գիւղաքաղաք մ'է Տ. Մատէն, բայց բաղդատմամբ գաւառիս ուրիշ գիւղաքաղաքներու, նաեւ Գըր Շէհիրի ու Չօրումի նման գաւառակներու, շատ շէն ու ծաղկած է իր առետրական կողմնակի հոսանքով:

Իր շրջակայ քաղաքներն են Գաղատիա (22 ժամ), Եօզկատ (20 ժամ), Գըր Շէհիր (16 ժամ) եւ Գալէճիք (12 ժամ):

Ինչպէս յիշեցի վերը, երկրագործութեան ու պարտիզպանութեան այժմեութիւնները միջակ են: Տ. Մատէն չունի Պօզուզի առատաբեր երկրագործութիւնը որ կրնայ ամբողջ գաւառը տարիէ մ'աւելի կերակրել եթէ չարտածուի: Բայց անուրանալի է որ, ինչպէս ամէն բան տենդոտ գործունէութեամբ մը զարգացում ունի, առաջ կը մղուի սա նորաշէն գեղաքաղաքիս մէջ, երկրագործութիւնն ալ օրըստօրէական բարգաւաճում մը ցոյց կու տայ:

Արդ, աւելորդ չեմ սեպեր հոս ներկայացնել Տ. Մատէնի արտածութեան եւ ներածութեան միջին հաշուեցուցակը:

Տորեն	քիօ 2.000.000
Պրօն	քիօ 350.000
Վուշ (քէթէն թօխումու)	քիօ 250.000
Պալամուս (խոզկաղին)	քիօ 100.000
Մազը (աս ալ խոզկաղին)	քիօ 10.000
Քիթթէ	քիօ 10.000
Ճէհրի (տորոն)	քիօ 15.000
Գարի	քիօ 500.000
Բուրդ	քիօ 150.000
Մորթ	քիօ 50.000
Իւղ	քիօ 25.000
Ապովխտ	քիօ 20.000
Բամպակ	քիօ 15.000

Ներածությունը

Կշռելի նիւթեր (օգգա մալր)	2.000.000
Փերեզակի նիւթեր (աղդարիէ)	200.000

Կշռելի նիւթերու կը վերաբերին շաքար, սուրճ, օճառ, երկաթ, պողպատ, մոմ, քարիւղ եւ այլն:

Փերեզակի նիւթերու կը պատկանին սիկարի թուղթ, դերձան, հայելի, եւ այլն:

Վերի աղդարիէի մէջ կը գտնուին նաեւ մանիֆաթուրաձ:

Արհեստներ

Տ. Մատէնի մէջ գործուող արհեստներն են՝ կօշկակարութիւն, երկաթագործութիւն, դերձակութիւն, ոսկերչութիւն, սափրիչութիւն, թամբագործութիւն, մսավաճառութիւն, թիթեղագործութիւն, անագագործութիւն, հացագործութիւն եւ այլն:

Հասարակաց շէնքեր

Մզկիթ	հատ 2
Եկեղեցի	հատ 2
Ժողովարան	հատ 1
Բաղնիք	հատ 1
Սրճարան	հատ 9
Գինետուն	հատ 2
Վարժարան	հատ 9
Պանդոկ	հատ 3
Կառապանի պանդոկ	հատ 3
Ճաշարան,	0
կամ ըստ եղանակին	1-2

Տեղագրական այս ամփոփ ծանօթութենէ վերջ, մասնատրենք խօսքերնիս եւ ձեռք առնենք ազգագրական ճիւղը:

Ազգագրական

Տ. Մատէն

Ինչպէս խօսեցանք վերը, 1200-1300 տուն կը հաշուրդի Տ. Մատէն: Ա-սոնցմէ 250-270 տունը հայ (այս թուին մէջ են նաեւ 15-20 բողոքականներ), 280-300 տունը յոյն եւ մնացածները թուրք են:

Թուրքեր

Թուրքերը բնութեամբ հեզահամբոյր, պարկեշտ ու քաղաքավար են: Ա-սոնցմէ շատերը դրամատէր ու խաշնատէր մարդիկ ըլլալով՝ առհասարակ բարեկեցիկ են: Թէեւ մասնատր արհեստի մը չեն հետեւիր, բայց օր ըստ օրէա-

⁸ Մանիֆաթուրա (ֆրնս.)- տարագագործական արտադրութիւններ, տպածոյի վաճառականութիւն:

կան հակում մը ունին դէպի վաճառականութիւն: Իսկոյն իւրացնել կ'ուզեն ինչ որ շահաւէտ է: Ամէն ոք օրինակելի յարգանք ու մեծարանք մ'ունի իր քրիստոնէայ քաղաքացիին հանդէպ: Տարիներու հոսանքին մէջ շա՛տ հազուադէպ է գողութիւն մը եւ կամ ոճիւր մը: Տ. Մատենի թուրք կիները մասնաւոր զբաղում չունին: Օրն ի բուն տան գործերով եւ իրենց գաւակներուն հոգածութեամբ կը պարապին: Բայց բաղդատմամբ էրիկմարդոց, անելի դիւրագրգիռ ու կռուասէր են, մանաւանդ շոայլ:

Թուրքերը ունին երկու մզկիթ ու երեք հատ ալ դպրոց՝ մէտրէսէ⁹, ըրիշտի-յէ¹⁰ եւ իպթիպայիէ¹¹ անուններով: Ասոնց մէջ ըրիշտիյէն գնահատելի ադինք մը կ'արտադրէ, շնորհիւ դասատու Եուսուֆ էֆ.ի, որ կրթական գործին անձնուէր մշակ մ'է: Այս դպրոցներէն մէտրէսէի եւ իպթիպայիյէի ծախքերը կը հոգացուին ժողովուրդի քսակէն, իսկ ըրիշտիյէինը մէտրիֆի¹² գանձէն:

Յոյներ

Տ. Մատենի բնիկ յոյները կոշտ ու կոպիտ մարդիկ են: Հակառակ եօզղատոցի ու կեսարացի բարեկիրթ յոյն գաղթականութեան հետ իրենց ունեցած շօշափման, դեռ կը պահեն ու կը պահպանեն իրենց սովորոյթները, ծէսերն ու տարազները: Ասոնց համար, միմիայն քրիստոնէայ կը սեպուին յոյները, զորս ուրիշ ազգերէն կը յատկանշեն «խրիսթիան» մակդիրով: Մասնաւոր ատելութիւն մը կը տածեն ոչ-յոյն ազգերու մասին: Տենդոտ պահեցողներ ու ջերմ պահպանողականներ են: Ամէն տուն ունի իր պաշտելի իկօնան եւ կամ մելանոյշ *պանայեան*, զորս կը խնկարկեն եւ կը մոմագարդեն օրն ի բուն եւ գիշերն ի բուն: Վա՛յ անոր որ կը յանդգնի անարգական խօսքեր ըսել այս սուրբերու նկատմամբ: Իսկոյն բզիկ բզիկ ընել կը փորձեն հայիոյիչը կամ ծաղրածուն: Այս բնիկները ընդհանրապէս երկրագործ, քարակոփ եւ որմնադիր են:

Գալով յոյն գաղթականներու, ասոնք առհասարակ կրթեալ եւ լուսաւորեալ մարդիկ են: Մեծ բաժին ունին արհեստի եւ վաճառականութեան մէջ: Կատարեալ սէր ու փափաք կը տածեն կրթական հաստատութիւններու հանդէպ գործով եւ ոչ խօսքով:

Տ. Մատենի յոյները ունին մէկ եկեղեցի եւ երկու հատ ալ դպրոց արական, իգական: Եկեղեցին թէեւ փայտաշէն, բայց բաւական շքեղ է: Մինչեւ մօտ ատեններ երկու քահանայ ունէր Մատենի յոյն եկեղեցին՝ Հաճի եւ Պանայուտ անուններով, բայց վախճանմամբ աստիճանաւոր Հաճի էֆ.ի, հիմա անձնորոյն կը հովուէ Պանայուտ էֆ.: Մանչերու դպրոցը, որ 140-150 ուսանող ունի, կը կառավարուի 3 դասատուներու ձեռքով, մին հմտունակ իսկ երկուքը՝ անճարակ: Այս դպրոցը ո՛չ իր անցեալովը կրնայ պարծենալ եւ ո՛չ ալ ներկայով: Թէեւ բաւական փորձ ու հմուտ դասատուներ ունեցած է Տ. Մատենի յոյն դպրոցը, բայց յոյներն ալ հայերուն պէս, չեն սիրեր մնայուն դասատու մը ունենալ. նոր տարի եւ նոր դասատու ըլլալու է: Ահա այս պատճառաւ կրթական

⁹ Մետրեսէ (արաբ.)- իսլամական աստուածաբանական վարժարան:

¹⁰ Րիշտիյէ (արաբ.)- բարձրագոյն նախակրթարան:

¹¹ Իպթիպայի (արաբ.)- տարրական նախակրթարան:

¹² Մէտրիֆ (արաբ.)- կրթական տնօրէնութիւն:

արդիւնքը միշտ զերօ է: Չմոռնանք յիշել թէ Մատէնի մէջ լաւ տաճկագէտ յոյն երիտասարդներ ալ կը գտնուին, որոնք երբեմն դասատու, իսկ հիմա խանութայան, բազմարդին Տիգրան էֆ. Անդրէասեանի աշակերտներն են ընդհանրապէս:

Իգականներու յատուկ վարժարանին վրայ չպիտի խօսիմ, որ հիմա փակուած է, քանզի կը լսենք թէ. «Յարեաւ վարժուիին... եւ ցրուեցան ամենայն աշակերտուիք նորա յերեսաց նորա»:

Հայեր

Մեծապէս կը սխալին ամէն անոնք որ, մակերեութեամբ ուսումնասիրելու ի-ամտութեան մէջ կը գտնուին Տ. Մատէնի հայ տարրը: Այս փոքրիկ գաղութը կատարելապէս սերտելու համար, անոնց ներքին խաւերուն թափանցել, անձնիւր անհատի բազկերակը զննել, քննել պէտք է:

Տ. Մատէնի հայութիւնը գաղութ մ'է համակ, իրարմէ առաւել կամ նուազ տարբեր ժամանակներու մէջ տեղաւորուած: ՏԻ մասնիկը մեծագոյն դեր մը կը կատարէ այս ժողովուրդին մէջ, բոլորովին անջատ երեք ճիւղերու բաժնելով զանոնք. Կիրինցի, Կեսարացի եւ Եօզկատցի յատկանիշերով: Գոգցես ուրոյն ազգեր են ասոնք, միշտ զինուած իրարու դէմ՝ ատելութեամբ եւ վատ ետերով: Ուստի անկ է որ համառօտակի ուսումնասիրենք հայ մայր-գոյնի տակ ծածկուած այս տարբեր գոյները:

Կիրինցիներ

Թո՛ղ ներուի առաջնութիւնը կիրինցիներուն կ'ընծայենք: Այս տարրի մէջ ազգային պարագլուխ ըլլալու տենցով արբշիռ, Մենձ աղա յորջորջուելու յոյսով երազուն մէկէ աւելի իտէլականներ գտնուելուն համար է որ, առաջնութիւնը անոնց կ'ընծայենք ի գոհացում իրենց սիրելի տենջանքներուն:

Իբր 90-100 տուն կը հաշուեն կիրինցիները, որ գրեթէ ընդհանուր առմամբ *կէզէքճիութեամբ* Տ. Մատէն եկած եւ տուն տեղ եղած են, հրապուրուելով անշուշտ շահաւէտ առուտորներէ:

Տնտեսական վիճակ

Ասոնց մեծ մասը այսօր ալ *կէզէքճի* է: Իւրաքանչիւրը իր մասնաւոր գիւղերն ունի, ինչպէս նաեւ իր աղան: Խօսակցութեան պահուն շատ անգամ կը կրկնուի «Սագգօ (Սարգիս)ին աղան Թահիր պէկը», «Թաթօ (Թադէոս)ին աղան Հասան պէկը» եւ այլն: Այս գիւղերը եւ աղաները, կամ իրենք իրենց հաւատարմութեամբ շահած, մագնիսած են, կամ իբր ժառանգ ստացած են իրենց հայրերէն: Անուրանալի է որ, կիրինցի *կէզէքճի*ները մեծ յարգանք ու համարում կը վայելէին երբեմն աշիրէթներու մէջ:

Ինչ որ ալ ըլլայ, կիրինցիները գործունեայ, ճարպիկ մարդիկ են: Ումպէտ խաղերով, անիմաստ զուարճութիւններով ժամավաճառ ըլլալ չեն սիրեր եւ այս պատճառաւ առ հասարակ բարեկեցիկ են: Տ. Մատէնի միակ եւ եզական հարուստն է դարձեալ կիրինցի մը, հաճի Յարութիւն աղա Սավուլեան, որ ծանօթ անձնաւորութիւն մ'է գաւառիս մէջ իր բարեգործութիւններով:

Ֆիզիքական հանգամանք

Կիրիւնցիները նշանակելի են ֆիզիքայէս: Քաջատոռոջ եւ յաղթանդամ են: Գէր կազմուածքով, լուսաշող աչքերով, կարմրով ալտերով, մեծ մասամբ պարթեւ հասակով, յամր ու պատկառոտ քայլուածքով, հայութեան տիպարներն են գոգցես: Կիրիւնցի երիտասարդները թէեւ բիրտ ու տգէտ (յարգելով բացառութիւնները), բայց ֆիզիքայէս կոյս վիճակ մ'ունին: Անոնց համար չեն, «Ինքնապաշտպանութիւն»ներ, «Առողջապահութիւն»ներ, Նաշիկեանի եւ Աէքլէմեանի թարգմանութիւններ եւ չգիտեմ ինչեր: Այդպիսի համաճարակ տիտերու անուններն անգամ լսած չեն անոնք: Տ. Մատէնի Ազգ. վարժարանի մէջ պաշտօնավարութեանս միջոցին եթէ սրտի գոհունակութիւն մ'ունէի, ահա այս կէտն էր: Ես, անձնական դատողութեամբս, կիրիւնցի երիտասարդներուն ոչ-ընկերական չէզոքութեանը կը վերագրեմ իրենց անբիծ կուսութիւնը: Վկայ է ինձ պատմութիւնը որ, շօշափումը իր հրահանգիչ ու լուսաւորիչ յատկութիւններով հանդերձ, քանի՛ քանի ապականիչ, թունաւորիչ ախտեր, սովորոյթներ ալ ներմուծած է այսինչ ազգերու, այսինչ քաղաքացիներու եւ ընկերներու մէջ:

Բարոյական վիճակ

Մեծ մասամբ սակաւապէտ են կիրիւնցիները: Ինչպէս ուտելիքի, նոյնպէս հագուստի ու կապուստի մասին միշտ պարզը, անսեթեւեթը, բնականը կը նախընտրեն: Տիպար քրիստոնեաներ են, ո՛չ գործնականապէս: Իրիկուն եւ առաւօտ եկեղեցի կը յաճախեն, պաշտօնապէս: Տենդոտ պահեցողներ են, աննդաբար: Ասոնց մէջ շատեր ծայրէ ի ծայր գոց գիտեն եկեղեցական առօրեայ սրբասացութիւնները: Վա՛յ այն քահանային կամ երաժիշտին, որ կը յանդգնի կամ կը միամտի սխալ բան մը կարդալ, իսկոյն բամբ ծայն մ'է որ կը բարձրանայ ատեանէ եւ կու գայ ճշդելու տառական սխալն անգամ: Առհասարակ ինքնահաւան են: Ամէն ոք մեծ կարեւորութիւն կու տայ իր խօսքին եւ մասնաւոր շեշտով մը կը յայտարարէ անոր վսեմութիւնը: Ահա այդ պատճառով ողորմելի մարդուկներ, ասունի ու անասունի խառնուրդներ են ուրիշ տեղացիները իրենց աչքին առջեւ: Ասով հանդերձ, շատերը դատողութենէ, նկարագիրէ զուրկ մարդիկ են: Աւելի կը սիրեն այսինչ մոլորակին արբանեակել, քան իրենց *եւր* անկախօրէն գործածել: Ասոնք ալ գալէճիքցիներու նման եկեղեցին քաւարան մը կը նկատեն, մեղաց պէսպիսութիւններու դէմ: Վերջապէս Տ. Մատէնի կիրիւնցի ազգայինները զերծ ու ապահով են քաղաքակրթութեան (գաւառական ըմբռնումով) բարի եւ չար ազդեցութիւններէ:

Ուտելիք

Կիրիւնցիները մսամով չեն: Աւելի կը սիրեն բանջարեղէն, քան մսեղէն եւ խմորեղէն: Ասոնց առաջնակարգ կերակուրներն են հերիսա, դդում, հացուհակիթ, կէօֆթէ (բառ պարսկ. = ծեծուած, ջարդուած), տեսակ մը բանջար, որ Կիրիւնէ ընծայ կը ղրկուի իրենց քաղաքակիցներուն, հէլվա (բառ արաբ. (հէլավէթ) = անուշութիւն, անուշեղէն), տօլմա եւ այլն: Թէեւ ուրիշ շատ մը կերակուրներ ալ կը գործածեն, բայց անոնք բուն Կիրիւնի կերակուրներ չեն, այլ շօշափմամբ իրացուցած են ուրիշ տեղացիներէ: Հերիսան ձմեռի կերակուր է,

զոր կ'ուտեն հարուստները իրենց դրկից դրացիներով եւ ուրիշ հրաւիրեալներու հետ: Դրումը աղքատի կերակուր է, զոր կը հոչակեն *դրախտի կերակուր* (ճէննէթ թա'ամը):

Հերիսան պատրաստելու եղանակը.- *Եարման* (եարմա = լուացուած եւ վերջը ծեծուելով մաշկը հանուած ցորեն, կորկոտ) կը լեցնեն իրիկուրնէ խոշորկեկ սանի մը մէջ՝ հաւասար չափով եւ կ'իջեցնեն թոնիրի մէջ: Վերջը հնդկահաւի կամ կովի եւ կամ ոչխարի 1, 2, 3, 4 օխա¹³ միս կը ձգեն մէջը: Մինչեւ առաւօտ լաւ մը կ'եփի: Առտուն մսին ոսկորները կը զատեն եւ կը սկսին ծեծել մասնաւոր թակերով այնպէս որ մազի պէս բարակնայ: Ուտելու ժամանակ մասնաւոր խալկինի մը մէջ կը լեցնեն, մէջտեղը կարագով լեցուն պնակ մը կը զետեղեն եւ տաքդեղ (սեւ կամ կարմիր պղպեղ) ցանելով՝ կ'ըմբոշին են անկուշտ:

Հացուհակիրթ.- 5-10-20 հատ հակիրթ կը կոտրեն ամանի մը մէջ: Դգալով կը խառնեն որ դեղինը եւ ճերմակը իրարու միանան, յետոյ փուռիկը (ֆուռուն էքմէյի) կը կոտրեն շերտ շերտ եւ թաթխելով հակիրթի մէջ կը տապկեն կարագով:

Կիրինցիները առ հասարակ կիներու հետ կերակուր չեն ուտեր: Կինը իբր յետին արարած, անբաժին է բոլոր զուարճութիւններէ եւ ընտանեկան յարաբերութիւններէ: Բայց տակաւ վենրալու վրայ է այս նահապետական դրութիւնը, շնորհիւ ուրիշ քաղաքացիներու հետ իրենց ունեցած շոշափման:

Կիրինցի պգտիկները էմմի (հօրեղբայր) կ'ըսեն իրենց հօր, ինչպէս հարս, էգէ (կրճատուած թիյ-էգէ-ի = մօրաքոյր)՝ իրենց մայրերուն: Այս տարօրինակութեան վերահասու ըլլալու համար բաւական հարցուփորձեր ըրի: Վերջապէս սա եզրակացութեան յանգեցայ թէ, կիրինցիները մեծ յարգանք ունին տան մեծերու հանդէպ: Օրեր, ամիսներ, տարիներ՝ երկա՛ր տարիներ կ'անցնին եւ ծնողը չեն կրնար իրենց հոգեհատորիկները ողջագուրել իրենց մեծերուն առջեւ, ինչպէս նաեւ գաղտագողի: Չի ժտեր մայր մը իր սիրականը ծունկերուն վրայ նստեցնելով՝ գգուել, խնամել եւայլն: Միայն գիշերները կը համբուրէ իր ծագուկը ահուդողով՝ որ մարդ չտեսնէ: Պզտիկը «հայր» կ'ըսէ իր պապուն եւ «մայր» իր մամին, եւ երբ լայ, «էմմիդ գնա՛, քեզի փարա թող տայ, հարսին գնա՛, շաքար թող տայ» կ'ըսեն: Ահա այս պատճառով մանչուկը, հակառակ բնատուր սիրոյ, գոգցես կը տարակուսի իր կենսատուներու հանդէպ, մինչեւ տան մեծերուն յափտենական նինջը: Ով որ կը հանդուրժէ եղծանել այս օրէնքը, վա՛տ է եւ անպատկառ:

Կեսարացիներ

Տ. Մատէնի կեսարացի գաղութը 70-80 տուն է, միասին առնելով նաեւ թալացիները, կերմիրցիները եւ էրթիլէտցիները, որոնք Կեսարիոյ արուարձաններն են:

¹³ Օխա.- ծանրութեան չափ, որուն արժէքը փոփոխական էր՝ ըստ տեղի ու ժամանակի: Մերթ կշռած է 213.6 կրամ, մերթ՝ 400, 1225, 1282, 2.225 են:.

Կեսարացիները իրենց առեւտրական սուր հոտառութեամբ, ինչպէս ամէն տեղ, նոյնպէս ալ Տ. Մատէն եկած եւ հաստատուած են, գրեթէ կիրիւնցիներու հետ միաժամանակ:

Տնտեսական վիճակ

Կեսարացիներն ալ առհասարակ բարեկեցիկ են: Գնահատելի ճարպիկութեամբ շահու աղբիւրներ կ'որոնեն: Ասոնց մեծ մասը խանութայան են, պագգալիէ, աթթարիէ եւ մանիֆաթուրա կը ծախեն: Կան իրենց մէջ նաեւ արհեստաւորներ, ինչպէս կօշկակար, դարբին եւ այլն:

Տ. Մատէնի կեսարացիները 70-80 տուն կը հաշուեն, որ իրենց յատկանիշը եղող առեւտրական սուր հոտառութեամբ, հետզհետէ Տ. Մատէն գաղթած եւ հաստատուած են:

Տնտեսական վիճակ

Կեսարացիները, որ առեւտրական աշխարհի վրայ թափառական հրէայի դերը կը կատարեն զոգցես, բնական տնտեսագէտներ են եւ ծնունդով վաճառական: Մանրագլին քննութիւն մը պէտք է, աղքատին ու հարուստին կենցաղավարութեան տարբերութիւնը որոշելու համար: Հեռո՛ւ, շա՛տ հեռու են արդուզարդէ: Իրենց միակ նշանաբանն է աշխատիլ ու շահիլ: Կարծես որ ոսկին ասոնց փնտռութիւն վախճալով, դեղնած է:

Բնական տնտեսագիտութեան մէջ ո՛չ նուազ գնահատելի են կիներն ալ: Փոխանակ ումպէտ ու ջնջին ծախսերու, զարդ-ոսկի դիզել է միշտ իրենց տենջանքը, որուն տենդոտ սիրահարներն են: Ահա այս պատճառով, երբ երիտասարդ մը իրենց աղջիկներու ձեռքը խնդրէ, առանց որեւէ բարոյական ու ֆիզիքական հանգամանք մը որոնելու, անհամբեր կը հարցնեն. «դրամ ունի՞»: Մայրերու սիրուն իտէլան է մանկութենէ սկսելով օժտել իրենց աղջիկները: Ուստի, եթէ աղջիկ մը 14-15 տարեկան հասակը թեակոխէ, լիակազմ կը գտնէ իր սնտուկը հարսնցուի մը պէտք եղած առարկաներով եւ իրեն կը մնայ միայն...: Կեսարացի կինը խիստ լաւ կռահած է ժամանակին յարգը ու զործունէութեան հրաշքները, ուստի միշտ կ'աշխատի, տրամադրելի ժամանակ մ'ունենալով նաեւ բամբասանքի եւ այլանումի: Տ. Մատէնի կեսարացիներն ալ մեծ մասով բարեկեցիկ են:

Ֆիզիքական հանգամանք

Կեսարացիներու ֆիզիքական վիճակը լաւ է: Առ հասարակ սովորական հասակով, թուխ դէմքերով, կարմրուկ ու կլորիկ այտերով, գիրուկ կազմուածքներով, սեւ աչքերով ու յօնքերով, տափակ քիթով, միջակ բերանով սիրուն տեսք մ'ունին: Աւելի պատկառելի են ջոջերը հին տարագներու տակ, այսինքն իրենց եղանակին յարմար մուշտակներու ու մետաքսեայ պարեգօտներու մէջ:

Եւայի թռնիկները մեծ մասով զգլխիչ ու դիպելի են: Աստղիկը անոնց գրաւիչ հանգամանք մը պարգեւած է որ, առաջին տեսութեամբ կը գերեն մեր բանաստեղծ ճահիլները: Եւ յիրաւի, ո՛վ չի պաշտեր աղու նայուածքով, սեւ-

րակ ու բոլորակ աչքերով, աղեղածե յօնքերով, կարմրուկ այտերով եւ վարդ շրթունքներով դիցուհի մը:

Ա՛րդ, հակառակ հայ թերթերու գուժած ինչ ինչ բարոյական անկումներու (պանդխտութեան հետեւանք), կեսարացի կինը, միշտ հաւատարիմ գտնուած է իր էրկանը, անոր երկարատեւ ու անտանելի պանդխտութեան մէջ, օրօրելով իր վիշտերը մեղանոյշ ու մաղձոտ երգերով:

Բարոյական վիճակ

Ինչպէս որ ըսինք, ճարպիկ, բանգէտ ու արթուն մարդիկ են կեսարացիները: Բնութեամբ չափազանց խնայող եւ կամ շիտակը խօսելով բաւական կծծի են: Բարեկամութիւն, անձնօրհրութիւն, մարդասիրութիւն, պարագային համեմատ հիւրասիրութիւն, պատիւ, ասոնց ամէնն ալ շահու մէջ կը փնտռեն (միանգամ ընդմիշտ ըսենք որ, ամբողջ գրութեանս մէջ բացառութիւնք յարգի են): Բնական հակում ու համարում ունին իրենց քաղաքացիներու հանդէպ: Թէեւ կիրինցիներուն չափ ո՛չ եկեղեցասէր, բայց մեծ յարգանք ու սէր կը տածեն իրենց ուղղափառ կրօնին ու Ս. Եկեղեցիին համար: Անուրանալի ճշմարտութիւն մ'է որ, օրինակելի ծառայութիւններ կը մատուցանեն բարեգործական հաստատութիւններու մէջ, եթէ իրենց գործ մը յանձնուի:

Ուտելիք

Կեսարացիները թէեւ մսեղէն ու բանջարեղէն կերակուրներ ալ կը գործածեն, բայց աւելի կը սիրեն խմորեղէնը: Հացկերոյթներու մէջ առաջին տեղը կը գրաւէ խմորեղէնը: Խմորեղէններու մէջ շեշտելի է տեսակ մը քաճար, որուն կեսարացիք *ճաշ* պատուանունը կ'ընծայեն: Ահա պատրաստութեան կերպը. ալիւրը ջրով շաղուելէ եւ գոյացած խմորէ մանր մանր պէգիներ (պէյզ կամ պէյտ, բառ արաբ.՝ հակիթ) շինելէ ետք, գլաններով կը բարակցնեն, ինչպէս՝ եօզկատցիներ՝ *եուֆգա* կամ *եուգա* շինելու ատեն: Այս բարակցած եուֆգաներէ ամէն մէկուն վրայ հալած իւղ կը քսեն, մէջտեղը իւղով խորոված ալիւր (խորիզ) եւ ընկոյզի միջուկը կը լեցնեն: Կողմնակի եփելէ վերջ վրան մեղր, շաքար կամ ռուպ կը դնեն եւ...

Կեսարացիներ առհասարակ փուռի հաց կ'ուտեն, ո՛չ թոնիրի հաց գիտեն եւ ո՛չ ալ *եուֆգա*: Աւելորդ է Կեսարիոյ հանրաձանօթ ապուխտին վրայ խօսիլ հոս:

Եօզկատցիներ

Տ. Մատենի վերջին գաղթականութիւնն է եօզկատցիները, որ մօտ ժամանակամիջոցի մը գաղթած ըլլալով, մեծ մասամբ վարձով կը նստին թէ՛ խանութներու եւ թէ՛ տուներու մէջ: Եօզկատցիք 60-70 տուն կը հաշուեն:

Տնտեսական վիճակ

Տնտեսագիտութեան մէջ եօզկատցիք կեսարացիներէ[ն] շատ յետադէմ են: Յուցամոլութիւն, փառասիրութիւն եւ չափազանցութիւն. ահա այս երրորդութիւնն է որ միշտ կը նսեմացնէ եօզկատցիի մը մէկէն աւելի բարի եւ տիպար հանգամանքները: Ուստի երբ կեսարացի մը իր բարի կամ չար գործերը ան-

շուքապէս եւ գաղտագողի կը կատարէ, եօզղատցին թմբուկով կ'ընէ ասոնք: Կեսարացին կարեւորին համար ստակ ծախսելէ կը զգուշանայ, իսկ եօզղատցին անկարեւորին դրամ կը վատնէ անխնայ: Կեսարացին հիւրասիրութիւնը շահու մէջ կը փնտռէ, բայց եօզղատցին շահը հիւրասիրութեան մէջ կ'որոնէ: Կեսարացին հարուստ մեռնելու համար աղքատ կ'ապրի, սակայն եօզղատցին հարուստ ապրելու համար աղքատ կը մեռնի: Ահա այս պատճառաւ Տ. Մատէնի եօզղատցիներէն շատերը տնտեսապէս անցուկ վիճակի մէջ են: Եւ զարմանալին այն է որ, միշտ առաջնակարգ են բարեգործական տուրքերու շարքին մէջ:

Եօզղատցիներու վրայ ասկէ աւելի չպիտի խօսիմ հոս, քանզի մտադիր եմ մասնաւոր յօդուածով մը ներկայացնել Եօզղատի համայնապատկերը մի քանի ամիս վերջ, եթէ «Բիւրակն» ու ես կենդանի մնանք:

Արդ, հրապարակաւ կը խոստովանիմ որ, թերութիւններէ զերծ չպիտի ըլլան ազգագրականներս, քանզի ես համայնքի մը մանրանկարներն է որ կ'ուրուագծեմ, անթերին կը մնայ Կեսարիոյ եւ Կիւրիւնի օդը ծծած գրիչներու:

Կրթական գործ

Տ. Մատէնի հայերը բաւական սէր ունին կրթական գործին նկատմամբ: Բայց, զարմանալի՞ գործ, գիւղաքաղաքիս օդը հագիւ հազ տարի մը կամ երկու տարի կրնայ առողջարար ըլլալ դասատուի մը. վերջապէս կը թունաւորէ...

Տ. Մատէնի հայ տարրը տարեկան 60-80 ոսկի ծախքով երկսեռ դպրոց մը ունի: Եւ այս դրամը յետագայ բաժանումը ունի.

Տնօրէն դասատուին կու տան տարեկան 25-36 օսմ. ոսկի:

Երաժիշտ դասատուին կու տան տարեկան 15-18 օսմ. ոսկի:

Վարժուհիին կու տան տարեկան 15-18 օսմ. ոսկի:

Օգնական դասատուին կու տան տարեկան 5-8 օսմ. ոսկի:

Գումար 60-80 օսմ. ոսկի:

Այս ստակը կը գոյանայ աշակերտ եւ աշակերտուհիներու թոշակէն, եկեղեցիի կիրակնօրեայ *թապախէ[ն]*¹⁴, մկրտութեան, պսակի եւ թաղումի ատեն դպրոցի մասնաւոր իրաւունքէ[ն], անզաւակ ազգայիներու տարեկան տուրքերէ[ն] եւ այլն:

Աղեքսանդր Գլըճեան

¹⁴ Նկատի ունի պատարագի ընթացքին դրամահաւաքութեան նպատակով պտտցուող սկուտեղը:

AN UNPUBLISHED REPORT OF 1900 ON DENEK MADEN (KESGIN)

(Summary)

MIHRAN A. MINASIAN

mihran.min@gmail.com

The report is one of the very few documents existing on the Armenian-populated town of Denek Maden (Kesgin). It was written by the town teacher, Agheksanter Keyedjian, in 1900 and submitted to the ethnographic magazine of Constantinople, *Puragen*, but was not published.

The town was located in the province of Kershehir in the Anguria (Ankara) district and was the center of its namesake sub-province, Denek Maden.

The author starts with general notes on Denek Maden and then details the lives of the local Turks and Greeks, their financial conditions and value system.

The author situates the Armenians of the town in this context and notes that there have been three major and separate waves of Armenian immigrations: those who came from Gurin, those who came from Caesarea, and those who came from Yozgat. Then the author describes the character and profile of each of these immigrant groups, their financial and educational conditions, their businesses, careers, crafts, trades, cuisine, etc.

The report bears further importance due to the fact that very little has been written about Denek Maden and is mostly scattered over different papers and in a number of memoires.